

ԱՐԳԱՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

1904 թ. ապրելի 15-ին Բաթումում սրտի պայթիւնից վախճանուեց և նոյն ամսի 20-ին Թիֆլիզում, Վանքի աւագ եկեղեցու դաւթում իւր յաւիտենական հանգիստը գտաւ յայտնի հրապարակախօս և հասարակական գործիչ Արգար Յարութիւնեան Յովհաննիսեանը, «Փորձ» ամսագրի և «Արձագանք» շաբաթաթերթի ու ապա օրաթերթի խմբագիրը:

Հին-Ջուղայեցի Տէր-Յովհաննէս քահանայի որդի Յարութիւնը Լազարեան ճեմարանում և Մոսկուայի համալսարանում յաջողութեամբ աւարտելով իւր ուսման ընթացքը, իբրեւ բժիշկ վերադառնում է Կովկաս, պետական ծառայութեան մէջ է մտնում և իւր ընդունակութեամբ ու հմտութեամբ աչքի ընկնելով դատնում է Կովկասի փոխարքայ Ն. Կ. Բ. մեծ իշխան Միխայէլ Նիկոլայեւիչի անձնական բժիշկը:

Բժիշկ Յովհաննիսեանը ամուսնանում է Թիֆլիսի օր. եղիսարէթ Ղուբայիսի հետ և խաղաղ ընտանեկան կեանք վարում:

Նիւթապէս ազատովուած և հասարակական յայտնի դիրք ունեցող այս ընտանիքում 1849 թ. մայիսի 14-ին ծնւում է Արգարը և սկզբնական կրթութիւնը տանը ստանալով 1860 թ. ուղարկւում է Պետերբուրգ, Պետերբուրգում բժիշկ Յարութիւնի ազգական յայտնի բարեգործ Մկրտիչ Սանասարեանը աշխոյժ ու խելացի պատանի Արգարին տալիս է Կարապետ եղեանի պանսիօնը: Պանսիօնում պատրաստուելուց յետոյ Արգարը մտնում է Պետերբուրգի գիմնազիօնը և հասնում է մինչև VI դասարանը. այդ միջոցին ծանր հիւանդանալով վերադառնում է Թիֆլիս, առողջանում ու մտնում տեղական գիմնազիօնի VII դասարանն ու յաջող կերպով աւարտում ուսման ընթացքը:

Այնուհետեւ կրկին գնում է Պետերբուրգ և համալսարանի իրաւաբանական բաժնի ուսանող դրւում. սակայն երկու տարի ուսանելուց յետոյ նորից թողնում է Պետերբուրգը և արտասահման գնալով Գերմանիայի Լայպցիգ քաղաքի համալսարանում փիլիսոփայութիւն և քաղաքական տնտեսութիւն է սովորում:

1872 թ. աւարտելով համալսարանական ուսման ընթացքը, վերադառնում է հայրենիք և իդէալական գաղափարներով ողևորուած անմիջապէս հասարակական գործունէութեան է նուիրւում, հրատարակելով մի շարք հայերէն գրքեր:

1876 թ. Արգարը հրատարակում է «Փորձ» եռամսեայ հանգէսը

զուտ հայկական—գրականական ուղղութեամբ հաւաքելով իւր շուրջը այն ժամանակի հայ գրական լուսադոյն ուժերը, Կարճ միջոցից յետոյ նրան յաջողուեւ է եռամսեայ հանդէսը դարձնել ամսագիր: Արդէն 1875 թ. ամսականացած լինելով օր. Դարիա Քեղխուզեանի հետ, երոգական փայլուն կրթութիւն ստացած այս ընտանիքը հայ երիտասարդութեան կենտրոն է դառնում, պարբերական գրական երեկոյթներ են լինում այդ տեղ և մշտքերի փոխանակութիւն տեղի ունենում:

1881 թ. Արզարը նիւթական մեծ շնաններ կրելով ստիպուած է լինում զաղարեցնել «Փորձը», բայց մէկ տարուց յետոյ «Արձագանք» շարաթաթերթն է հրատարակում. ժամանակի ընթացքում «Արձագանքը» դարձաւ նախ պատկերազարդ և ապա օրագիր և հրատարակում էր այնպիսի մեծ ծաւալով, որի նմանը չկար կողկասում:

Թէ «Փորձը» և թէ «Արձագանքը» լի են բազմաթիւ ազգագրական նիւթերով, արժանի կացուցանելով խմբագրին յիշատակուելու և այս մասնագիտութեան մէջ:

Արզար Յովհաննիսեանը բացի խմբագիր լինելուց, տասնեակ տարիներ եղել է հոգարարձու Ներսիսեան զպրանոցում, քաղաքային իրաւասու, Հրատարակչական ընկերութեան նախագահ, հայ թատրոնական մասնագիտովի անդամ, փոխադարձ վարկի ընկերութեան անուշ և ազա կառավարիչ, երեք անգամ ընտրուել է կաթողիկոսական ընտրութեան պատգամաւոր և միշտ նշանաւոր գեր է կատարել ընտրութիւններ միջոցին և այլն: Գերմաներէն հրատարակել է «Armenische Bibliothek» և Եւրոպացիներին ծանօթացրել է հայ գրական տաղանդների երկերը, պրօֆ. Ֆինկի հետ հրատարակել է Գերմանիայում «Zeitschrift für armenische Philologie» հանդէսը. ֆրանսերէն թարգմանել է Բաֆֆու մի քանի վէպիկները և Փարիզում հրատարակել: Ֆրանսիական հասարակապետութիւնից ստացել է պալմ դ'ակադեմի պատուաւոր շքանշանը:

Եւրոպացի նշանաւոր ճանապարհորդներն ու գիտնականները, ինչպէս օրինակ պրօֆ. Կօնիքիլը, Դիլիօնը, Շանարը, Ռօբրուիլը, Ֆինկը ու այլք մեծ յարգանքով ու սիրով են յիշել Արզար Յովհաննիսեանի անունն իրենց երկերի մէջ: Գերմանացի յայտնի բանաստեղծ Բոզէնշտէյլը (Միլդա-Շաֆի) ցմահ նրա բարեկամն էր:

Թէ որպիսի յարգանք և համակրութիւն էր վայելում հանգուցեալը հայ հատարակութիւնից պարզ ցոյց տուեց նրա թաղման հանդէսը:

ԻՄԱՀԱԿ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ